

ստակ կուտան ու հումմետաքսը դըր- | դարուն խիստ երևելի գիւտերէն մէ-
սէն կը բերեն . ուստի աս գիւտը մէր | կը պիտի ըլլայ :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



|| ԱՀԱՅԱԼ : ||

ԱՀԱՅԱԹԵՒԿ' ըսուին ընդհանրա-
պէս ան կենդանածինները որ իրենց
թերուն վրայ լայն մաշկ մը ունենա-
լով կրնան օղուն մէջ վերանալ ու
թռչիլ : Խամկօրէն աս կենդանիները
թռչնոց կարգը կը սեպուին , բայց ի-
րօք կատարեալ չորբոտանի են : Ը ա-
տը կուրծքելնուն՝ ոմանք ալ փորեր-

նուն վրայ ծիծեր ունին . ամէնքն ալ
գիշերային են , ու գլխ 'ի վար իջնելով
իրենց ետեի ոտուըներովը պատի կամ
ծառի վրայ կը կազին կը կենան :

Բնապատումները բոլոր մաշկա-
թեներուն կարգը երկու սեռ կը բաժ-
նեն . մէկ սեռին տակը եղածներուն
կապկատիս՝ կ'ըսեն , մէկալներուն չընէ
կամ բուն մաշալեն : Լապկաքիսնե-
րուն թերու շատ լայն չեն , հապա
միայն այնչափ որ անոնցմով կրնան օ-
դուն մէջ իրենք զիրենք քիչ մը բըռ-
նել , ու ծառէ ծառ թռչիլ . ասոնք

1 Բնապատումները ասոնց ընդհանրութ անուն
մը առաւ ուզելով յունական բառով նշուալն (Գ.լ.
Cheiroptere) կ'ըսեն . մենք մաշալեն բառը 'ի նախ-
նեաց ունենալով՝ կրնանք ան բառին տեղը գործ-
ածել : Աւելի սովորական է մեզի Չամի կամ
Չամին , Չիւ , Ձշմին ըսելը (որ կենդանւոյն
ձայնէն առնուած կ'երևնայ) . ռամկօրէն սէիմուչ
ալ կ'ըսուի . տճկ . Անգ Գուշու , կամ Եաւէւէ , Արտա-
գուշու , Անգիւէւէ :

1 Գ.լ. յունական բարգութ՝ Galéopithèque.

2 Գ.լ. Ptéroponde կամ Ptérope , որ յոյն բառ
է , ու կը նշանակէ Աւագին կամ Աւագուն :

ինչուան հիմա միայն Հնդկաց ծովուն կղզիները գտնուած են. տեղացիք ալ կ'որսան զիրենք ու կ'ուտեն : Ասոնց մէկ տեսակը միայն ծանօթ է՝ որ կար միր կապկաքիս կ'ըսուի, ու կատուի չափ է : Իսկ հասարակ մաշկաթեները կամ չղջիկները շատ տեսակ են. ասոնց մէջ խիստ խոշորները արեւելեան Հնդկաստանի անտառները կը գտնուին, իսկ մանր տեսակները գըրեթէ ամէն տեղ : Հայտնի է ամենուն որ չղջիկները բոլոր ձմեռը բարձր տեղեր ու ձեղքերու մէջ թմրած կը մնան : Արենց կերակուրը ամառը օդուն մէջի միջատներն են : Ոյսչելու ատեն շատ վարպետ են ինչ և իցէ արդելքէ զգուշանալու և իրենց ընթացքը փոխելու : Ափալանցանի բընագէտը 1793-ն ասոնցմէ մէկքանին կուրցուցեր ու թողեր է որ թոշին . տեսեր է որ անոնք ալ ացք ունեցողներուն պէս աղէկ կը թոշին ու ասդիս անդին զարնուելէն կը զգուշանան եղեր :

Այս պատկերին մէջ երեցածը Այաւա կղզին մէջ գտնուած խոշոր չղջիկն է, որ տեղացւոց լեզուովը Վալն կամ Վալնէ կ'ըսուի :

Ասոր երկայնութիւնը մէկ ոտք է . երկու թեւերը բացած ատենը՝ մէկ թեւէն ինչուան մէկալ թեւին երկայնութիւնը ն ոտք է : Արեսունը որս ակույ ունի . 16 հատ վերի ծնօտին, 18 հատ ալ վարինին վրայ : Ոյսերուն գոյնը մութ կարմիրի կը զարնէ . իսկ գլուխն ու մարմինը ընդհանրապէս սեի կը զարնեն :

Վալնի կը Այաւային ցած կողմերը շատ կը գտնուի, ու միշտ շատը մէկ տեղ ցորեկը բարձր ծառի վրայ ետեի ոտուրներուն ճանկերովը բռնած՝ ծառին ճիւղերէն գլխ'ի վար կը կախուին, և ինչուան հարիւրաւորը մէկտեղ : Շատ կը սիրեն Հնդկաստանի մէջ եղած տեսակ մը թղենիի վրայ բնակիլ որուն ճիւղերը շատ անդամ բոլոր գոցուած կ'ըլլան ասոնցմով : Բնդհանրապէս բոլոր օրը լուռ կը կենան . բայց

թէ որ յանկարծ խուզվութիւն մը ծագի մէջերնին՝ սուր ձայներով կը ձուան : Անանկ ուժով ճիւղերը ճանկած կը կենան, որ ինչուան թեւերնին սաստիկ չթօթուեն՝ չեն կրնար խալսիլ . ուստի թէ որ անանկ կախուած ատենին զարնուելու ըլլան՝ վար չեն իյնար, հապա հոն կախուած կը մնան : Արսորդները հրացանը պարպելէն առաջ զանոնք կը վախցընեն, որպէս զի սկսին թուշրտիլ, ու վերջը կը զարնեն : Երիկունները արեւելուն պէս իրենց տեղերէն կ'ելլեն ասոնք, ու գեղերը՝ դաշտերը կ'իջնան կերակուր գանելու համար :

Վալնին թուշիլը հանդարտ՝ ծանր ու շիտակ է, և երկար ատեն կրնայ թուշիլ . Վալնին որսը Հնդկաստանցոց մեծ զուարծութիւն է, որ լուսընկայ եղած գիշերները կ'ընեն, երբոր պտղատու ծառերուն վրայ կ'իջնայ . և շատ անդամ մէկ ժամուան մէջ ինչուան չորս հինգ հատը կրնան սպաննել :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

(Ո) Է բարե կարեւ և բարեպաշտութիւնը դաստիարակի մը ամէն հատարելութիւններուն հիմք պիտի ըլլայ :

Այս բանն որ կիկերոն ու կուինտիլանոս ճարտասանէ մը կը պահանջեն, նու թէ աղէկ մարդ ըլլայ ու կատարեալ առաքինի, նոյնը կը պահանջուի նաև անոնցմէ՝ որ տղաքը գիտութքը ու առաքինութեամբ պիտի կը թեն . մանաւանդ թէ ասոնց աւելի հարկաւոր է աղէկ մարդ ըլլալը : Ա ասն զի գրեթէ անկարելի բան է որ՝ կարենանք ամենայն սիրով ու բոլոր ծանքով աշխատիլ բանի մը վրայ՝ թէ որ մոքելինիս չդնենք թէ ան բանը մեր գլխաւոր գործն ու նպատակն է,